

ԱՅԼԵԱԲԱՅԼԵ

ՆՈՐԱՆԻՒՌԻՔ

Հոռուստիկորի ինքնագործ գործի:

Փորձողի Անժապլեր լուսանկարիչն ինքնա-
գործ լուսանկարի գործի մը հնարած է: Դասեօժ էն
այն գործիչներն, որոնց մէջ որոշեալ գրամ մը
ձգելով, գործիչն ինքնին սահմանեալ գործողու-
թիւնն մը կը կատարէ: Այս գործիչն այժմ լու-
սանկարչութեան ծառայութեան մէջ ալ մտած է:
Միեւնոյն ժամանակ ի Պրիւրի մեքենագէտ մը եւ
ի Բարիզ Անժապլեր այն գործիչը գտան: Ա՛ր-
ջնոյն գործիչն հետեւեալ կերպով կը գործէ.
Գործիչին վրայ նշանակուած ծակի մը մէջ դրամ
մը կը ձգուի, եւ ամսուսի մը վրայ կը նստուի:
Գործիչին վրայ նշանակուած կետի մը կ'աղաւթն
ալ դնեն. նոյն միջոցին սլաք մը հետեւեալ բա-
ւերոս վրայ կամայ կամայ կ'անցնի, այսպէս՝ Pré-
parez-vous! Attention! Pose! (Կատարաստու-
եցէք, մտադրութիւն, նստեցէք): Նստողն պետք
է որ անշարժ մնայ՝ ցարկէ որ փոքրիկ զանգակ մը,
որ գործիչին վրան է, կը հօշէ, այն է՝ 3—6
երկրորդական վայրկեան: Հինգ րոպէ ետքը նստո-
ղին լուսանկարն թիփշ դան վրայ եւ թղթէ շրջա-
նակի մէջ ծակէ մը դուրս կ'ելլէ: Այս գործողու-
թիւնը կը կատարուի ինչ կարգաւորութեամբ:

ՏՆՏԵՍՈՒԿԱՆ

Զգեստը կամ լամբը ջրայ տնթնախնցի ընկէ:

Պէտք է 2 ֆունտ պալուէզ (սլոս, շա) մէկ
այմը (eimer) ջրայ մէջ լաւել: Նոյնպէս որչի մէկ
անսօնայ մէջ մէկ այմը ջրով լաւելու է 2 ֆունտ
կապարի քաջախ (sous-acétate de plomb): Այ-
նուհետեւ երկու լաւեմաններն իրարու խառնելու
եւ բաւական ատեն հանդարտ թող տալու է, որ
միջոցին ծծմբածխածնական կապարի դրսիւր յա-
տարը կը նստի: Եետոյ այդ խառնուրդն զգուշա-
ւորութեամբ որչի անսօնայ մէջ կ'անցուի, միտ դնե-
լով՝ որ յասակի մըտը ընառնուի ծորելայն եւ
դուրս մնայ: Այս ծորելայն է ահաւասիկ այն խառ-
նուրդն, որուն մէջ զգեստ կամ կառուկէն մը
ձգուելու ըլլայ, ջրէն անթիւ փանցիկի կ'ըլլայ: Լաւը
ծորելէն հանելէն ետեւ՝ պէտք է քամալ եւ որ-
շափ կարել եւ ըստ օգոյ մէջ շարքնել:

ՄԵՆԵՐԱՆԻՐԻՔ

Եւրոպայի թագմանայ քաղաքներն:

Վերմաներեն լրագրայ մը տուած տեղեկու-
թեան համեմատ՝ Եւրոպայի ամենէն բազմամարդ

քաղաքներն են հետեւեալները. Լոնտոն ունի
3,832,400 բնակիչ, Բարիզ 2,225,910, Պրիւրի
1,222,500 (°) եւ Վիեննա 1,103,110 բնակիչ:
Ռեւենն Եւրոպայի այս շրջ մեծ քաղաքներու մէջ
կը բնակի 8,283,960 հոգի, որ է աշխարհի հին-
գերորդ մասին Աւստրալիայ եւ Բոլիւնգի բնակչայ
(4,232,000) գրեթէ կիկիւն: Միայն Լոնտոն աւելի
բնակիչ ունի քան Սաքսոնիա (2,9(2,000)), կամ
Հելսինքի (2,846,000): Բարիզ աւելի բնակիչ
ունի քան Աւստրալիայ ցամաք երկիրն (2,193,200)
կամ ամբողջ Թունիզ (2,100,000), Պուլիորիա
(1,998,980), Յունաստան (1,979,420), Վերթեն-
պերկ (1,971,120), Յանիմարցա (1,969,000),
Եւրոպիա (1,913,500), Սերպիա (1,700,000) եւ
այլն: Այս միլիոնաւորներու կը յաճորդեն հետեւ-
եալքը կարգաւ. Բեթեմբուրի ունի 876,570
բնակիչ, Մոսկու 611,970, Կ.Պոլս 600,000,
Ալապկ 555,940, Լիբլու 552,430, Նեապոլիս
493,110, Պրիւրիս 400,760, Լիւս 372,890,
Մարտիա 367,280, Պուտաբլք 360,580, Մար-
սէյլ 357,530, Մանիւգր 341,510, Վարչա
339,340, Միլան 321,840, Ամսթերտամ 317,010,
Տուպին 314,660, Լիւս 309,840 եւ Հոմ
300,470:



ՎԵՐԱԵՅՆԵՆ ՏԵՍՈՒՐԱՆ

Վիեննա, 23 Փետրուար 1890:

Փետր. 18ին վախճանեցաւ ի Վա-
րչա Անտրաշի կոմսը 68ամեայ հասակին
մէջ, որ իբրեւ Հունգարիոյ պաշտօնէից
գանձից եւ մանսանդ իբրեւ Անտրաշի-
Հունգարիայ Արտաքին գործոց պաշտօ-
նեայ անդիւստացած էր դարուս ստալին
քաղաքագէտներէն մին: Այս անուանի
կոմսին մահուամբն Աւստրիոյ-Հունգա-
րիոյ պետութիւնը կորսնցոյց իւր ամե-
նանշանաւոր անդիւններէն մին:

Օրդանի դուքսն յանկարծակի Բարիզ
գալով խնդրեց որ գաղղիական բանակայ
համար զինուոր առնուի: Կառավարու-
թիւնը զայս լսելով զինքը բանտարկել
տուաւ, եւ դատատանի հանելով իբրեւ
տէրութեան կարգադրութեանց օյննա-
գանց երկու տարուս բանտի դատապար-
տեց: Կրտսի թէ քիչ ժամանակէն բան-
տէն պիտի արձակուի եւ դարձեալ աք-
սորուի:

Գերմանիոյ Գուլիկմիս կայսեր գործաւորաց դասուն վիճակը բարոյեկելու համար բրած մեծանձն ու խոյնմ առաջարկութիւնն այս ամուռն ամենանշանակալից դէպքերէն մին է:

Գրեթէ տարիէ մ'ի վեր Գերմանիոյ գործաւորաց մամաւանդ աշխատներու բանտորաց մէջ մեծ շարժում կայ եւ ստէպ ստէպ քանկոնդ կ'ընէ պահանջելով որ իրենց աւուրչեն ատելնայ եւ քանելու օրական տեւողութիւնը նոսազցուի:

Այս խնդիրը թէ կայսեր եւ թէ կառավարութեան մեծ մտատանջութեան առարկայ եղած էր ճաւական ժամանակէ ի վեր, համազուած ըլլալով որ գործաւորաց խնդիրն ընկերավարական կուսակցութեան խնդիրն հետ սերտ յարաբերութեան մէջ է, եւ որչափ գործաւորաց տեգործութիւնը կ'աւելնայ, նոյնչափ ալ կը գործնայ ընկերավարականաց կուսակցութիւնն ու ազդեցութիւնը: Ընկերավարականաց տոյն վիսաակար ազդեցութիւնը, որ բովանդակ տիեզերաց համար ծանր հետեւութիւն ունի եւ պիտի ունենայ եթէ այս խնդիրը մեծ խոնձմովեամբն ու իմաստուն մարդաբնութեամբն չլուծուի, քեկանելու եւ միւս կողմանէ գործաւորաց ստուգիւ խնդը վիճակը բարոյեկելու համար արթուն ու իմաստուն Կայսրն իր պաշտօնէնց հետ ստէպ ստէպ խորշուրդակցելով՝ կոչեց իւր պետական բարձրագոյն ժողովն ի խորհուրդ, առաջարկեց անոնց այս ծանր ու մեծ խնդիրն իւր ըովանդակ հետեւութիւններովն, խնդրեց որ ամէնքն ծանրապէս խորհին ասոր վրայ եւ իրենց հասուն որոշումներն մերձաւոր նստին մէջ ի խորհուրդ հանեն: Նոյնպէս իւր կառավարութեան միջնորդութեամբն ուրիշ եւրոպական կառավարութեանց ծանոյց իւր միտքն ու քաղճանքն, որ ըլլոր տէրութեանց պատգամաւորներէ գումարեալ ընդհանուր ժողով մը կազմել կ'ուզէ եւ այս նպատակաւ կը հրաւիրէ ամէն տէրութիւններն իրենց պատգամաւորներն որոշելու եւ առաքելու:

Արդարեւ մեծանձն, մարդասէր, արթուն ու իմաստուն վէրայպետի խորհուրդ ու առաջարկութիւն:

Մինչ ոչ այնչափ լաւատես ենք որ իսկոյն հաստատենք թէ այս առաջար-

կութեամբ նոյն ծանր խնդիրը լուծուի ու հարթուի, եւ ոչ այնչափ յոռետես, որ իսկոյն յուսահատինք, հաստատելով թէ նոյն խնդիրն այսպիսի խորհուրդներով ու առաջարկութիւններով չի կրնար լուծուիլ: Այո, իսկոյնը մեծ ու ծանր է եւ ճաւական ժամանակի դեռ կարօտ. սակայն միտ դնելը եւս որ գործաւորաց ու ընկերավարականաց խնդիրը լուծելու համար այսպիսի տիեզերական ու արմատական միջոցաց ցարդ չէր ծեռնարկուած:

Այս մեծ գաղափարն ծնանողին համար միւր յատուկ շնորհակալութիւնն կը մատուցանենք, եւ կը մաղթենք որ լիովն յաշողութիւն ունենայ, վասն զի համազուած ենք, որ եթէ երկու կողմանքն եւս մարդասիրաբար ու քրիստոնէաբար իրարու ծեռ կարկառեն, ստուգիւ համամատաւար սակաւ ժամանակի մէջ տոյն խնդիրը լուծուած ու հարթուած կը տեսնենք:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌՈՅՈՒՄՆԵՐՆԵՐ

ԳՐԱԿԱՆ — Ազգաբնագնդոս առ Գեղարայ ասորի եւ պիտեղասոյ. 49:

ԼԵՋՈՒԽԱՐԱՆԱՆԱՆ — Նոր հայազէտ մը. 53:

ՊԱՏՄԱՆԱՆ — Լեհաստանի ազգայնոց անցեալէն. 55:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ — Ճորոխի վրան եւ շուրջը. 59:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ 61:

ԿԵՆՍԱՆԴՈՒԹԻՒՆ — Եովսէփ Վարդան Փաշա. 62:

(Պատկերու):

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ — Հետազտութիւնը նախնեաց ռամկոթնին վրայ. 64:

ՄԱՆԱՆԱՆՈՒՄԱԿԱՆ — Փաւստոս Բուզանդ. 68:

ԲԱՆԱՏԵՂԺԱՎԱՆ — Գարուն. 71: — Բառախաղ.

71: — Բառեղծուած. 72: — Անեղծուածք. 72:

ԱՐԹԻԵՑԻՆԵՐՆԵՐ

ՏՆՏԵՄԱԿԱՆ — Զանի մը դիտողութիւնը տնային ծաղկաբուծութեան վրայ. 72:

ԱՐԻԵԻՏՄԱՆ — Անեւտրական մանրալուրջ. 74:

ԲԱՐՈՅԵՐՆԵՐ

ԱՆՃԱՆԱՄԻՐՈՒԹԻՒՆ — Նորագոյն ժամանակներէն գրոյց մը. 76:


ԵՍԵԻԿԵՍԵՐ

ՆՈՐԱՆԱՐԻՔ — Լուսանկարի ինքնագործ գործի. 79:

ՏՆՏԵՄԱԿԱՆ — Զգեստը կամ լաթը չորս անթափանցիկ ընել. 79:

ՄԱՆԱՆԱՆՈՒՐԻՔ — Եւրոպայի բազմամարդ քաղաքներն. 79:

ԲԵՂԵՐՆԵՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ 79:



ՀՐԱՏԱՐԱՎԻՉ ԵՒ ՊԱՏՄԱՆԱՆԱՆՈՒ ԽՈՐԱԿՈՒՐ

4. ԻՍՏԱՅԵԼ 4. ՊԱՐՈՆՉ

ՎԵՐԱՆԱՆՈՒՄՆԵՐ ԶՅԱՐԱՆ